Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝<<Ներքին Բազմաբերդի Ե.Ասատրյանի անվան միջակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Թեմա՝ Կրթական կարիքների ուսումնասիրություն, որևէ կրթական կարիքին մանրամասն անդրադարձ, այդ թվում նաև գործնական աշխատանի ներկայացում, տեսանյութեր, նյութեր :

Վերապատրաստող, մենթոր՝ Սաթենիկ Սաֆարյան

Ուսուցիչ՝ Գնել Անուշավանի Թովմասյան

Երևան 2023

Բովանդակություն

1. Համառոտագիր _____ 3
2. Ներածություն _____4-5
3. ՈՒմ համար է կազմվում ԱՈՒՊ-ը և ինչպես _____6
4. Ինչ է ներառական կրթությունը_____7-12
5. Ներառական կրթության առավելություններն ու դժվարությունները ___13-17
6. Ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու խտրականությունը 18-20
7. Ներառական կրթությունը Հայաստանում _____ 21-23
8. Եզրակացություն _____23
9. Օգտագործված գրականություն _____24

Համառոտագիր

Սույն հետզնտական աշխատանքում ուսումնասիրվել է երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտման ձևերը, բացահայտումից հետո ուսուցչի գործողությունները և այդ խնդիրների լուծումը կրթության միջոցով: Ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք տարբեր կրթական կայքերից, ինչպես հայ, այնպես էլ ռուս ականավոր մանկավարժների կողմից հրատարակված ձեռնարկներից: Ձեռնարկների ուսումնասիրության արդյունքում կատարվել է եզրահանգում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները բացահայտվում են դպրոցում գտնվելու և դասապրոցեսի ժամանակ երեխայի կողմից դրսևորած մոտեցումների ընթացքում:

Երեխաների ուսումնառության ընթացքում հիմնականում նկատվում են հետևյալ խնդիրները՝ ձայնի և խոսքի խանգարում, տեսողության խանգարում, լսողության խանգարում, ինտելեկտուալ (մտավոր) խանգարում, շարժողական խանգարումներ:

Նախնական զինվորական պատրաստության դասի ժամանակ շարահրապարակում անցկացվում է գործնական պարապմունք <<Շարային պատրաստության թեմայով>>:

Վերցնենք մի իրավիճակ, երբ ուսուցիչը գործնականորեն ցույց է տալիս և ներկայացնում է հրամանատարին մոտենալու և հեռանալու կատարման գործողությունները, որից հետո հանձնարարում է աշակերտներին կատարեն նշված գործողությունները: Աշակերտների նշված գործողությունների կատարման ընթացքում նկատում է, որ երեխաներից մեկը հրամանատարին զեկուցելու ժամանակ չի կարողանում բառերը սահուն և հստակ արտաբերի, այս իրավիճակում հասկանում ենք, որ երեխան ունի ձայնի և խոսքի խանգարում (կակազում է):

Վերցնենք մի այլ իրավիճակ, երբ ՆԶՊ ուսուցիչը շարային պատրաստության դասի ընթացքում որոշակի գործողություններ կատարելու համար տալիս է հրամաններ, և այդ ընթացքում նկատում է, որ աշակերտներից մեկը անտարբեր է և չի կարողանում հրամանները ճիշտ կատարել: Այս ամենից ելնելով՝ ուսուցիչը այդ աշակերտին տալիս է անհատական հրաման.

- Շարքային Հակոբյան, ի՜նձ մոտ. այդ ժամանակ նույնպես իր ազգանունը լսելու ընթացքում երեխան ցուցաբերում է անտարբեր մոտեցում: Այս ամենից ելնելով՝ ուսուցիչը հասկանում է, որ աշակերտն ունի լսողության խնդիր:

Վերցնենք մի այլ իրավիճակ. դասի ընթացքում ուսուցիչը դաս է բացատրում՝ գրատախտակի վրա որոշակի նշումներ կատարելով, որից հետո հարցեր է տալիս աշակերտներին գրատախտակին կատարած նշումների վերաբերյալ և նկատում է, որ շարքի վերջում նստած երեխան աչքերը կկոցում է և դժվարանում է գրատախտակի վրա նշված նշումները կարդալ: Ուսուցիչը հասկանում է, որ աշակերտն ունի տեսողության խնդիր:

Երեխաների ուսումնառության ընթացքում վերը նշված կրթական կարիքների նկատման դեպքերում ուսուցիչը այդ մասին տեղեկացնում է տնօրենին, դասղեկին և ծնողին, որից հետո՝ ծնողի համաձայնությամբ, համապատասխան մասնագետի կողմից ախտորոշվում է երեխայի մոտ ունեցած առողջական խնդիրը:

Երբ մասնագետի կողմից հիմնավորվում է երեխայի մոտ եղած առողջական խնդիրը, այդ ժամանակ համապատասխան մասնագետի, ծնողի և դպրոցի կողմից փոխադարձ համագործակցության շրջանակներում օգնություն են ցուցաբերում երեխային:

Ուսուցչի և համապատասխան մասնագետների կողմից դասի թեմային համապատասխան կազմվում է ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ (ԱՈՒՊ) :

Ում համար է մշակվում ԱՈՒՊ-ը և ինչպես

ԱՈՒՊ-ը մշակվում է այն սովորողների համար, ովքեր ունեն դժվարություններ կրթության մեջ և սահմանված կարգով գնահատվել ու ճանաչվել են որպես կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Նրանք չեն կարողանում յուրացնել հանրակրթական ուսումնական ծրագրերը՝ առանց համապատասխան ծրագրային կամ միջավայրային հարմարեցումների:

ԱՈՒՊ-ի մշակման թիմում ընդգրկվում են բոլոր այն մարդիկ, ովքեր իրենց գործունեության ընթացքում առնչվում են երեխայի հետ և պետք է մասնակցեն երեխայի ԱՈՒՊ-ի գրելուն:

ԱՈՒՊ-ի թիմում ընդգրկվում են՝

Դասավանդող ուսուցիչները, մանկավարժահոգեբանության աջակցության թիմը (հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական մանկավարժ, լոգոպեդ և այլն), ուսուցչի օգնականը, սովորողը (հնարավորության դեպքում), սովորողի ծնողը, դպրոցի տնօրենը, դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը: ԱՈՒՊ-ի կազմելուց հետո, տվյալ դասարանում դասավանդող ուսուցիչները, յուրաքանչյուրը, ելնելով իրենց կողմից դասավանդվող առարկաների թեմաներին համապատասխան, կազմում են օրվա դասի պլան և երեխայի խնդիրներից ելնելով՝ այդ թեմային համապատասխան անհատական

ԱՈԻՊ-ի պլան: Եթե դասարանում կա առանձնահատուկ կարիք ունեցող երեխա, ապա այդ դասարանում դասն անցկացվում է նեռարական կրթության միջոցով:

Ինչ է Ներառական կրթությունը

Ներառական կրթությունը կրթության այն ծրագիրն է, որը բացառում է բոլոր տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար մոտեցում բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների համար: Ներառական կրթությունը կրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար: Ներառական կրթությունը փորձում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման: Չնայած այս ամենին՝ կրթության այս ձևն ունի իր դժվարություններն ու բարդությունները: Այն կայանում է նրանում, որ այդպիսի երեխաների մոտ համեմատաբար թույլ է հիշողությունը և գիտելիքը յուրացնելու ունակությունը…: Նշենք մեկ կարևոր փաստ ևս՝ որ ուսուցիչները պետք է հասկանան և ընդունեն այն հանգամանքը, որ եթե բոլոր երեխաներն ունեն կրթության իրավունք, ապա իրենց ուսուցիչների պարտականությունն է կրթել բոլոր երեխաներին:

Այսօր աշխարհում առկա է մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամության մոտ կես միլիարդ մարդ: Այդ մարդիք հաճախ սահմանափակված են ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական ալգերքներով, որոնք մեկուսացնում են նրանց հասարակությունից և հնարավորություն չի տրվում ակտիվորեն մասնակցելու իրենց երկրի զարգացմանը: Հաշմանդամների մոտ 85%-ն ապրում է զարգացող երկրներում: Այս ներուժը ուղղորդելու բանալին մարդկանց մտածելակերպն է. վիճակը փոխելու համար պետք է կրթել հասարակությունը և սերմանել հարգանք բոլոր մարդկանց իրավունքների հանդեպ: Շատ երկրների կրթական համակարգում ներառական կրթության արդյունավետ կազմակերպումը հասարակական հնչողություն է ստացել, քանզի դպրոցներում բնականոն զարգացում ունեցող երեխաների հետ կրթություն են ստանում նաև հատուկ կարիքներով երեխաներ, ովքեր համատեղ դասընթացային զուգընթաց լրացուցիչ կրթությոան իրավունք ունեն:

Նշենք այն կարևոր հանգամանքը , որ ներառական կրթությունը գործընթաց է, որն հենվում է երեխաների՝այդ թվում նաև հատուկ կարիքներ և սահմանափակ հնարավորություններ ունեցող, կրթություն ստանալու իրավունքի վրա:

Ներառումը՝ ներկայիս ըմբռնմամբ, ծագում է հատուկ կրթությունից: Հատուկ կրթության զարգացումն անցել է մի շարք փուլեր, որոնց ընթացքում ուսումնասիրվում են հաշմանդամ երեխաների և սովորելու դժվարություններ ունեցող երեխաների կարիքների ապահովման տարբեր ուղիներ: Որոշակի դեպքերում հատուկ կրթությունը լրացրել է հանրակրթությունը, իսկ այլ դեպքերում եղել է լրիվ առանձնացված: Վերջին տարիների ընթացքում կասկածի տակ է դրվել առանձնացված կրթական համակարգի նպատակահարմարությունը՝ ինչպես մարդու իրավունքների, այնպես էլ արդյունավետության տեսանկյունից:

Այս պահին կիրառվող մեթոդներն ու ծրագրերն ի վիճակի չեն բավարարելու մարգինալացման ու բացառման ենթարկվող երեխաների ու դեռահասների կարիքները: Անցյալում այդ նպատակով կիրառում էին հատուկ ծրագրեր, հաստատությունների և մասնագետ մանկավարժների օգնությանը: Նշեմ, որ կրթությունը պետք է համարվի յուրաքանչյուր անձի մարդկային ու ֆունկցիոնալ զարգացմանը նպաստող միջոց՝ անկախ ֆիզիկական կամ այլ խոչընդոտներից: Այսպիսով, որևէ տեսակի հաշմանդամություն չի կարող արգելք լինել մարդու կրթություն ստանալու իրավունքի համար: ՈՒստի, ներառումը ենթադրում է մի գործողության ծավալման, որն ուղղված է բոլոր սովորողների բոլոր կարիքներին:

· Ներառական կրթությունը ընդունում է, որ բոլոր երեխաները կարող են սովորել:

· Ընդունում և հարգում է երեխաների տարբերությունները՝ տարիքը, սեռը, լեզուն, զարգացման խնդիրները, անձի առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն:

· Պահանջում է կրթական կառույցներին, համակարգին և մեթոդաբանություններին ուսումնական գործընթացը կազմակերպել և իրականացնել բոլոր երեխաների կարիքներին համապատասխան:

· Հեռակատար ռազմավարական կարիք ունեցող հիմնախնդրի՝ ներառական հասարակության կառուցման գաղափարի առաջմղման մասն է:

· Դինամիկ ու զարգացող գործընթաց է:

· Ներառական ուսումը հիմնականում ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում:

· Ներառումը սահմանափակ կարիք ունեցող երեխաներին հնարավորություն կտա կրթություն ստանալ իրենց բնակավայրերում և չմեկուսանալ ընտանիքներից:

· Ներառական կրթությունը ունեցած խնդիրների արդիական լուծումներն է առաջարկում հանրակրթական համակարգին և կարող է ապահովել, որ բավարարվեն բոլոր սովորողների կրթական կարիքները: Միևույն ժամանակահատվածում, ներառական ուսուցումը չի կարող զարգանալ հանրակրթության համակարգից դուրս, առանձին: Այն չի կարող նայել որպես առանձին, առանձնահատուկ հարց կամ ոլորտ, այլ պետք է դիտարկվի որպես ամբողջ ուսումնական համակարգի զարգացման սկզբունք:

· Որոշիչ է այն հարցը, թե ոնց է առանձին վերցրած երեխայի համար ապահովվում, որ նա ստանա իր կարողություններին և կարիքներին համապատասխան կրթություն: Եթե համակողմանի դիտարկենք երեխային, ապա դասարանական աշխատանքների պլանավորման ընդացքում վճռորոշ գործոն է համարվում դասարանում երեխայի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծումը:

· Մարդիկ տարբեր են, դա բնական է և ամբողջ հասարակությանը դարձնում է ավելի հարուստ, և, հետևաբար, պետք է իր արտացոլումը գտնի դպրոցում: Դպրոցները պարտադիր պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարքներ և, իհարկե, անհատական մոտեցում:

· Ներառական կրթություն նշանակում է, որ դպրոցը կարող է լավ ուսուցում տրամադրել բոլոր երեխաներին, անկախ նրանց տարատեսակ կարողություններից: Երեխաները պետք է

հարգալից վերաբերմունքի արժանանան և ստանան հավասար հնարավորություններ համատեղ սովորելու համար:

· Ներառական կրթությունը անընդդատ շարունակական գործընթաց է, ուստի ուսուցիչները պետք է առավել ակտիվ և ընբռնումով աշխատեն՝ ներառական կրթության նպատակներին հասնելու համար:

· Ի վերջո ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլոր աշակերտների համար:

Այս ուսուցումը կարող է պրակտիկայում փոփոխությունների կատալիզատոր հանդիսանալ, որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Հատուկ կարիքներով երեխաների ընդունումը ուսումնական հաստատություններում կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված մեթոդիկաներ, ապահովել մեծ քանակությամբ երեխաների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից հիմնականում օգուտ կստանան բոլոր աշակերտները:

Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ հատուկ կարիքներով աշակերտների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինի հատուկ հմտություններ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով աշակերտների ուսուցման համար իրենց անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը:

· Ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու խտրականությունը: Հասարակության մեջ սահմանափակ հնարավորություններ ունեցողների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Պատճառը հատուկ կարիքներով մարդկանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասն է:

· Ներառական կրթությունը կնպաստի աղքատության պատճառով առաջացող օտարման կամ բացառման երևույթների վերացմանը: Հաշմանդամությունն ու աղքատությունը սերտորեն փոխկապակցված են: Երկու դեպքերում էլ ներառական կրթությունը հնարավորություն է տալիս դիմակայելու նախապաշարումներին, օգնում է նրանց դուրս գալու ստվերից, սեփական տեսակետն արտահայտելիս լինել ավելի ինքնավստահ, կառուցել սեփական ապագան և դառնալ հասարակության լիիրավ անդամ:

· Հանրակրթական դպրոցներում ներառական կրթությունը նպաստում է սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների ուսման արդյունավետության և որակի բարձրացմանը:

Դպրոցից հեռու գտնվելու հավանականությունը համայնքից կամ բնակության վայրից, ինչը կարող է լրացուցիչ բարդություններ առաջացնել տեղաշարժման դժվարություններ ունեցող երեխայի համար,

•կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թվի սահմանափակումը ներառական կրթություն իրականացնող դպրոցում,

•բազմամասնագիտական թիմի անդամների փորձառության պակասը,

•իրազեկության պակասը, բացասական վերաբերմունքը աշակերտների և նրանց ծնողների կողմից,

•աշակերտների առանձնացումը դպրոցական համայնքի կողմից և «ներառականի երեխա» պիտակավորումը,

•այլ լրացուցիչ ծառայությունների ոչ պատշաճ կամ նպատակային մատուցումը բազմամասնագիտական թիմի կողմից:

Ներառում նշանակում է.

· ողջունել բազմազանությունը

· բարենպաստ պայմաններ ստեղծել բոլոր սովորողների և ոչ թե միայն բացառվածների համար

· դպրոց բերել այն երեխաներին, որոնք կարող են իրենց բացառված զգալ ·

կրթությունը հավասարապես մատչելի դարձնել բոլոր, այլ ոչ թե որոշակի կատեգորիաների երեխաների համար՝ առանց վերջիններիս բացառելու Ներառում չի նշանակում

· միայն հատուկ կրթության բարեփոխումներ, այլ նշանակում է ողջ կրթական համակարգի ձևական և ոչ ձևական բարեփոխում

· արձագանքել միայն բազմազանությանը, այլ նշանակում է բարելավել կրթության որակը բոլոր սովորողների համար

· հատուկ դպրոցներ, այլ թերևս՝ լրացուցիչ օժանդակություն աշակերտներին հանրակրթական դպրոցի շրջանակներում

· բավարարել միայն հաշմանդամ երեխաների կարիքները

· բավարարել մի երեխայի կարիքները մեկ այլ երեխայի հաշվին Կրթության մեջ ներառումը ենթադրում է.

· բոլոր աշակերտների կրթական կարիքների հավասար գնահատում

· դպրոցների վարած քաղաքականության վերակառուցում և դրա համապատասխանեցում աշակերտների բազմազանությանը

· դպրոցական՝ ուսումնական և մշակութային, համայնքային միջոցառումներին աշակերտների ներգրավվածության աստիճանի բարձրացում

· ուսումնական ոլորտում արհեստական խոչընդոտների վերացում և նրանում բոլոր աշակերտների ներգրավում

· խոչընդոտները հաղթահարելու փորձի ձեռք բերում, որը կոչված է ապահովելու որոշակի աշակերտների մասնակցություն ուսումնական գործընթացին

· սեփական համայնքում կրթություն ստանալու աշակերտների իրավուքի գիտակցում

· ինչպես աշխատակազմի, այնպես էլ աշակերտների համար դպրոցական պայմանների բարելավում

· դպրոցականների ու համայնքների միջև փոխշահավետ հարաբերությունների հաստատում

· կրթությունը՝ որպես հասարակության մեջ մարդու լիարժեք ներառման և ինքնադրսևորման կարևորագույն բաղադրամասի ճանաչում

Ինչու է պետք ներառումը

Երեխաները, անկախ սահմանափակ հնարավորություններ կամ կրթական դժվարություններ ունենալուց, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դեր ունեն հասարակության մեջ: Ներառման վաղ սկիզբը մանկապարտեզներում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախադրյալն է ինտեգրված կյանքի համար: Կրթությունը երեխաների կյանքի անբաժան մասն է: Սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաները կարող են և սովորում են հանրակրթական դպրոցներում՝ համապատասխան օժանդակությամբ:

Նշենք հետևյալ կարևոր կետերը.

1. Բոլոր երեխաները միասին սովորելու իրավունք ունեն:

2. Երեխաներին չի կարելի թերագնահատել:

3. Հաշմանդամ մեծահասակները պահանջում են վերջ տալ խտրականությանը:

4. Հատուկ դպրոցում չկա այնպիսի բան, որ չի կարելի անել հանրակրթական դպրոցում:

5. Խտրականությունը երեխաների մեջ սերմանում է վախ, տգիտություն, նախապաշարումներ, չարություն:

6. Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Նշենք շատ կարևոր հանգամանք, երբ ներառման գործընթացին կարելի է աջակցել հետևելով հետևյալ սկզբունքներին.

1. Փոխել վերաբերմունքը կրթական հատուկ կարիքներ ունեցողների նկատմամբ:
2. Նվազեցնել հատուկ դպրոց ուղարկվող երեխաների թիվը:
3. Կազմակերպել ուսուցիչների նախնական և աշխատանքին զուգահեռ վերապատրաստում:
4. Հաշվի առնել սահմանափակ հնարավորություններ ունեցողների կարծիքը:
5. Վերաուղղորդել ռեսուրսները և մասնագետներին:
6. Ստեղծել ներառական միջավայր:
7. Աջակցել համապատասխան քաղաքականության մշակմանը:
8. Աջակցել կրթության մեջ համակարգային փոփոխություններին: Այս ամենից կարելի է գալ հետևյալ եզրակացության, որ ներառական մոտեցումը շահեկան է բոլոր կողմերի համար: Խտրականությունը սահմանափակում է միմյանց հասկանալու հնարավորությունը: Ակնկալվող դրական արդյունքներից է հաստատվող նոր հարաբերությունների և ստեղծագործական հնարավորությունների ձևավորումը, որն անցյալում անհնար էր: Նշանավոր գրող և մեծանուն մանկավարժ Ղազարոս Աղայանի կարծիքով այդ երեխաների կրթումն ու դաստիարակությունը, նրանց նկատմամբ հատուկ ուշադրությունը մեծ նշանակություն ունեն ոչ միայն հենց այդ երեխաների, այլև ամբողջ հասարակության դաստիարակության համար:

Ներառական կրթության առավելություններն ու դժվարությունները

Ինչու՞ է անհրաժեշտ սահմանափակ կարողություններով երեխաներին ներառել հանրակրթական դպրոցում և ինչով է դա արդարացված: Խորհրդային տարիներին հաշմանդամներն ամբողջությամբ մեկուսացված էին հասարակությունից: Երեխաները հիմնականում պահվում էին համապատասխան հաստատություններում: Այնինչ երեխաների մեկուսացումը դանդաղեցնում է նրանց ֆիզիկական, հուզական, իմացական զարգացումն ու հասունացումը: Իսկ փորձը հաստատում է, որ հաշմանդամ երեխաների շրջապատում ավելի արագ են ինտեգրացվում, քան ապրելով մեկուսացված միջավայրում կամ էլ իր նմանի հետ: Նրանք դառնում են ավելի վստահ ու անկաշկանդ, քան հատուկ գիշերօթիկներում կրթված երեխաները: Փորձը ցույց է տալիս, որ սահմանափակ ունակություններով երեխայի համար հիվանդության ախտորոշման և այլ դիտարկումների վրա պետք է մշակվի անհատական ծրագիր: Բայց, ամեն դեպքում, մտավոր զարգացման շեղումներ չունեցող երեխաները հանրակրթական դպրոցներում հատուկ պայմանների ստեղծման դեպքում կարող են իրենց հասակակիցների նման սովորել, հաղորդակցվել և զարգանալ: Սակայն, սա հարցի միայն մի կողմն է: Ներառական կրթության իրականացումը կապված է մի շարք դժվարությունների հետ: Անհրաժեշտ է ոչ միայն հասարակության մտածողության վերափոխում, այլև հանրակրթական դպրոցներում որոշակի պայմանների ստեղծում: Օրինակ՝ անվասայլակ օգտագործող երեխաների համար անհրաժեշտ է դպրոցի ներսում ստեղծել հատուկ թեքահարթակներ կամ վերելակներ: Բացի այդ, փորձը ցույց է տալիս, որ հանրակրթական ծրագրերը բարդ են այդ երեխաների համար: Համեմատաբար թույլ է նրանց հիշողությունը և

ընկալման կարողությունը: Այդ պատճառով անհրաժեշտ է ստեղծել նաև հատուկ հեշտացված ծրագիր:

Ներառական կրթության ոլորտի մասնագետներն իրենց ուսումնասիրություններում ավելի շատ քննարկվում են կազմակերպչական բնույթի հարցեր. Կարևորում են սոցիալական գործոնները, կազմավորում են անհատական ուսուցման պլանները, ուշադրության է արժանանում այդ երեխայի հետ տարվող մեթոդական աշխատանքների կազմակերպումը: Ընդհանրապես հատուկ կարիքներով երեխաների հոգեկան զարգացման անհատական տարբերություններն անհրաժեշտություն են առաջացնում բացահայտելու նրանց արդյունավետ ուսուցման և դաստիարակության հոգեբանական հիմքերը: Այս բնագավառի հետազոտությունները՝ ընդգրկելով զարգացման կոնկրետ թերություններ ունեցող երեխաների, շեշտադրում են մասնավոր ախտահարումներ, որոնք համընդհանուր բնույթ չեն կրում: Այս ամենից հարց է ծագում, թե հնարավո՞ր է հետազոտման արդյունքում գտնել բոլոր երեխաների զարգացմանը նպաստող հոգեբանական բնութագրիչներ: Ներառական կրթության առանձնահատկությունների շարքին կարելի է դասել նաև համագործակցային փոքր խմբերի ստեղծումը: Քանի որ համատեղ աշխատանքում համախմբվում են զգայությունների փոխներգործության շնորհիվ, իսկ բնականոն զարգացումով սովորողների ինտեգրումն ապահովում է թիմային աշխատանքում գործընթացի ուղղորդումը: Որպեսզի զգալի, տեսանելի լինի կատարվող աշխատանքը հարկավոր է և պարտադիր, որ 11 աշխատանքային խմբերի բաժանելիս դրանց կազմում ներառվեն հատուկ կարիքներով և բնականոն զարգացմամբ սովորողներ: Ներառական կրթություն իրականացնելը բարդ ու դժվարին գործընթաց է, որի համար անհրաժեշտ է բազմամասնագիտական թիմ, համագործակցային աշխատանք: Թիմային աշխատանքում համագործակցելով և գերակա զգայության դրսևորման առանձնահատկությունը հաշվի առնելով՝ հնարավոր կդառնա գտնել իմացական գործունեության կայուն կազմնորոշիչ հիմքեր և ժամանակին կանխել նմանօրինակ հետագա կրկնությունը: Ընդհանրապես ներառական կրթության համակարգում ընդգրկված երեխաները զարգացման և ուսանելիության մակարդակով որոշակի առանձնանում են միմյանցից, որը անհրաժեշտություն է առաջացնում բացահայտելու նրանց արդյունավետ ուսուցման ու դաստիարակության հոգեբանական հիմքերը: Սրանից կարելի է հանգել հետևյալին, որ հատուկ կարիքներով երեխաներին պետք է հնարավորություն ընձեռել հակազդելու կոնկրետ առարկայի որևէ հատկանիշին, ապա կողք կողքի դրված մի քանի առարկաներից զուգորդությունների միջոցով ընտրել այն: Արդյունքում բարձրանում է

երեխայի զգայաշարժողական հակազդությունների մակարդակը, ինչը պայմանավորված է նաև ընկալման իրավիճակով: Ներառական կրթություն իրականացնելու համար, և՛ հատկապես արդյունավետ իրականացնելու համար նախ և առաջ այս կրթությունն իրականացնող հաստատություններին հնարավորինս պետք է հասանելի լինեն տարաբնույթ սահմանափակություն ունեցող սովորողների կարիքներին՝ համապատասխան շինությունների՛՛թեքահարթակներ, աստիճանների մոտ բազրիքներ և անհրաժեշտ բռնակներ՛՛ և սարքավորումների՝ մեխանիզացված դռների, վերելակի առկայությունը: Բացի այդ դասասենյակները և նրանցում առկա գույքը ևս պետք է հնարավորություն ընձեռեն, հատկապես, անվասայլակներով տեղաշարժվող աշակերտներին ազատ և ապահով աշխատելու, նստելու և ներգրավվելու խմբային աշխատանքներին: Դասարանում աշակերտներին անհրաժեշտ պարագաները ևս պետք է լինեն հասանելի և համապատասխան բարձրության վրա: Առանձնահատուկ ուշադրություն է անհրաժեշտ հատկացնել աշակերտների նստած դիրքին: Հատուկ կարիքներով երեխաների համար միջավայրային փոփոխությունը և անհրաժեշտ հարմարանքներով ու պարագաներով նրանց ապահովելն իրականացվում է միմիայն նրանց առանձնահատուկ կարիքների և սահմանափակումների գնահատման արդյունքներից ելնելով: ՈՒստի հատուկ կարիքներով երեխաների համար համապատասխան դասարան ընտրելու աշխատանքներն իրականացվում են հիմնական ուսուցչի և բազմամասնագիտական անձնակազմի համատեղ աշխատանքների արդյունքում: Նման աշխատանքներում մասնակցություն են ցուցաբերում նաև երեխայի ծնողները: Այս աշակերտների սովորելու ոճին և ունակություններին համապատասխան ընտրվում են նաև դասավանդման մեթոդներ և ցուցաբերվում է մասնագիտական աջակցություն տարբեր մասնագետների կողմից: Այս ամենի հետ մեկտեղ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում անհրաժեշտ է գնահատել և կիրառել աջակցման բոլոր հնարավոր միջոցները և եղանակները: Նշենք այն կարևոր հանգամանքը, որ երեխայի բնականոն զարգացման տեսանկյունից և սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով՝ նպատակահարմար է հատուկ կրթական ծառայությունների ապակենտրոնացումը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

· կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցերում,

· կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,

· երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման: Հատուկ ուսուցման կարիք ունեցող երեխաների կրթելու դժվարությունը կայանում է նրանում, որ նրանց մոտ համեմատաբար թույլ է հիշողությունը և գիտելիքը յուրացնելու ունակությունը: Ոչ մի դեպքում չի կարելի ստիպել կամ շտապեցնել նրանց: հաշմանդամ երեխաների ուսուցման գործում թեպետ անուղղակի, բայց կարևոր ներդրում ունեն նաև նրանց համադասարանցիները: Դասարանի կարծիքը շատ մեծ ազդեցություն ունի նրանց վրա: Եթե նույնիսկ հաշմանդամ երեխաները հատուկ գիշերօթիկ հաստատություններում շրջապատված են մասնագետներով, համապատասխան խնամքով, մնայուն է, իրենց շուրջը հիվանդություն են տեսնում: Առանց այս խնդրի լուծման ներառական կրթություն իրականացնելն անիմաստ է և անօգուտ: Այս ամենին հավելենք նաև այն, որ ուսուցիչները պետք է հասկանան և ընդունեն այն փաստը, որ եթե բոլոր երեխաներն ունեն կրթության իրավունք, ապա իրենց ոսուցիչների պարտականությունն է ուսուցանել բոլոր երեխաներին:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ ներառական կրթությունը հանրակրթության զարգացման մշտական գործընթաց է, որը ենթադրում է երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում: Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման հանդեպ առավել ճկուն մոտեցման: Հատուկ կարիքներով երեխաների ուսուցումը կազմակերպելիս պետք է հենվել հոգեբանական նուրբ մեխանիզմների վրա, մասնավորապես կիրառել այնպիսի մեթոդիկա, որի կիրառմամբ կբացահայտվեն զայաշարժողական համակարգի և երեխայի լեզվամտածողության միջև առկա կապերը: Չնայած ներառական կրթությունում առկա դժվարություններին այնուամենայնիվ ուսուցիչն ու բազմամասնագիտական թիմը համագործակցության արդյունքում կարող են հասնել որոշակի առավելությունների: Նշենք, որ ուսուցչի շնորհիվ է դասարանում ստեղծվում այն վստահության մթնոլորտը, որը թույլ է տալիս դասապրոցեսը դարձնել առավել հետաքրքիր, արդյունավետ և բազմաբովանդակ: Պետք է նշել, որ

ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. Եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել: Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար: Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հաշմանդամություն ունեցող երեխաներին: Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները: Չի կարելի ստեղծել ներառական կրթության համընդհանուր կաղապար, որը կարելի լինի առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչյուր հասարակություն: Ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները:

Սակայն կան որոշ հիմնական սկզբունքներ, որոնք պետք է հաշվի առնել ցանկացած միջավայ րում: Ահա դրանք

- մեթոդիկան այնպիսին է, որ նպաստում է բոլոր երեխաների ուսուցմանը,
- բոլոր երեխաները մասնակցում են բոլոր միջդպրոցական միջոցառումներին՝ մրցույթներ, ցերուկույթներ, էքսկուրսիաներ և այլն,
- ներառական կրթության զարգացմանն օժանդակում են ուսուցիչները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել,
- ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ՝ սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց, այնպես էլ չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:

Պետք է հիշել՝

– ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել,

– բոլոր երեխաներն էլ կարող են սովորել. պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար,

– կան բազմաթիվ կրթօջախներ, որոնք աշխատում են ի շահ հաշմանդամություն ունեցող երեխաների և լավ են կատարում իրենց աշխատանքը: Եթե ներառական կրթության մեթոդաբանությունը մշակված է ողջ կրթական համակարգի համար, ապա ամեն մի երեխա կգտնի իր տեղն այդ համակարգում, և հնարավոր կլինի դպրոցում սովորելը համատեղ ընտանիքի գրկում ապրելու հետ:

Ի՞նչ է անում ներառական կրթությունը

Նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնվորված է: Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաները պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ և պատրաստվելու կյանքին: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու խտրականությունը

Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Պատճառներն են՝տեղեկատվության բացակայությունը նրանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասը: Նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է: Սակայն փորձը ցույց է տալիս, որ բարենպաստ մթնոլորտում երեխաները ավելի հանգիստ, քան մեծահասակները, ընդունում են տարբերությունները: Երեխաները մեր ապագա ծնողներն են, ուսուցիչները, փաստաբանները և քաղաքական գործիչները: Եթե հաշմանդամություն ունեցող երեխաները ևս հաճախ են նույն դպրոցը, ինչ մնացածները, ապա բոլորի մեջ կձևավորվի անկանխակալ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, և կարմատավորվի այն գիտակցությունը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամներ են:

Ներառական որակյալ կրթություն. համագործակցություն, հավասարություն և մասնակցություն: Երեք քայլ, որ տանում է դեպի իրական ներառում:

- Թե ինչ խորությամբ է առանձին աշակերտը դիտարկվում որպես դժվարություններ ունեցող, կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով: Հատկապես անհրաժեշտ է նշել, որ դպրոցի միջավայրը՝ կազմակերպվածությունը, կիրառվող մեթոդները, տիրող վերաբերմունքը, կարող է կենտրոնական դեր ունենալ աշակերտի անհատական որակները դժվարությունների վերագրելու հարցում:
- Կարևորն այն է, որ ախտորոշումը, որն ընդգծում էր աշակերտի թերությունները, այլևս չի դիտարկվելու: Հիմնական մոտեցումը պետք է բխի այն գաղափարի ընդունումից, որ յուրաքանչյուր աշակերտ կարող է սովորել և ստեղծագործել: Դպրոցը պետք է պատասխանատվություն կրի ստեղծելու այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել և ստեղծագործել: Դպրոցի միջավայրը պետք է միտված լինի զարգացնելու յուրաքանչյուր երեխայի ներուժը և կարողությունները:
- Հաջորդ մոտեցումը չմեկուսացնելու սկզբունքն է, որը ներառական որակյալ կրթության գաղափարախոսության երրորդ հիմնաքարն է և վերաբերում է բոլոր սովորողների կարիքներին: Բոլոր խնդիրներն իրենց հանգուցալուծումները պետք է ստանան դպրոցի ներսում: Կազմակերպվածությունն ու ռեսուրսների հատկացումը պետք է բավարար չափով ճկուն լինեն, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ աջակցությունը տրամադրել անմիջապես

դասարանում: Կրթության հետ կապված խնդիրները, որ աշակերտները կարող են ունենալ, պետք է շարունակաբար քննարկվեն դպրոցի մանկավարժների և հատուկ մանկավարժական աջակցության թիմի անդամների հետ համատեղ: Դրա նպատակն է հնարավորինս վաղ կանխել հնարավոր խնդիրները՝ արագ առաջարկելով հնարավոր լուծումներ:

Բացի վերը նշված երեք «հիմնաքարերից», շատ որոշիչ է, որ դպրոցի անձնակազմն իր աշխատանքում որդեգրի երեք առավելապես կարևոր հասկացություններ, որոնք պետք է վեր դասվեն ուսումնական ծրագրից: Դրանք որակյալ կրթության իրական 3 ցուցանիշներն են՝ մասնակցություն, համագործակցություն և հավասարություն: Դրանք պետք է ուղղորդող սկզբունքներ լինեն կրթության պլանավորման և իրականացման բոլոր գործընթացներում: Երբ բոլոր սովորողների համար ապահովված է լիարժեք մասնակցության և համագործակցության միջավայր, և բոլորն ունեն զարգանալու հավասար հնարավորություններ, ապա կարելի է ասել, որ կրթությունը բարձր որակի է:

Կրթության իրավունքը վերաբերում է բոլորին

- Յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա սովորելու հանրակրթական դպրոցում՝ իր կարողություններին ու կարիքներին համապատասխան: Սկզբունքորեն այդ կարիքները պետք է բավարարվեն հանրակրթական դպրոցում և պետք է հստակ ըմբռնել, որ այս իրավունքն ապահովելը դպրոցի և պետության պատասխանատվության տակ է:
- Ցավոք, բազմաթիվ երեխաներ դեռևս դուրս են մնացել կրթությունից կամ մեկուսացվել են կրթական համակարգում, հատկապես հիմա, երբ ներառական կրթության գաղափարը դեռ լիովին չի ընդունվել Հայաստանի Հանրապետության դպրոցների և հասարակության կողմից: Հատուկ դպրոցները չեն կարող այս հարցի լուծում հանդիսանալ: Շատ փոքր է այն երեխաների թիվը, որոնց կարելի է առաջարկել, որ սովորեն հատուկ դպրոցներում: Հատուկ դպրոցները չեն կարող առանձնացված ծառայություններ լինել, դրանք պետք է ակտիվ դերակատարություն ունենան դպրոցների զարգացման գործընթացում՝ որպես հանրակրթական դպրոցներին աջակցություն մատուցող ծառայությունների կենտրոններ:
- Դպրոցների շենքերի մատչելիությունը, ինչպես նաև հատուկ նյութերի և սարքավորումների առկայությունը պետք է ապահովված լինեն այնպես, որ խոչընդոտ չհանդիսանան որևէ երեխայի դպրոցում սովորելու համար:
- Հատուկ և հանրակրթական դպրոցների միջև առկա պատնեշը տարիների ընթացքում աստիճանաբար կկորցնի իր արդիականությունը դպրոցական համակարգի համար, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ կստանձնի իր կարևոր դերը բոլոր երեխաներին անհրաժեշտ

ծառայություններ մատուցելու նպատակով: Մասնագիտական տեսանկյունից դա կապահովի դասավանդման որակի բարելավում, երբ տարբեր բնագավառների մանկավարժների փորձառությունն ու մոտեցումները հնարավոր կլինի ինտեգրել:

- Աշակերտի և նրա կրթության համար արդեն պատասխանատվություն կկրի հանրակրթական դպրոցի ուսուցիչը: Ռեսուրս-ուսուցիչների առկայությունը չի ենթադրի, որ նրանք կարող են ստանձնել այդ պարտականությունը հանրակրթական դպրոցի ուսուցչի փոխարեն:
- Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն պատասխանատու կլինի, որ դպրոցի ծրագրերն ու դպրոցը մատչելի լինեն բոլոր երեխաների համար, հաշվի առնեն երեխաների կարիքները, պարբերաբար վերամշակվեն, իրականանան և գնահատվեն: Նման ծրագրերի և դրանց գնահատման արդյունքները կխթանեն դասավանդման նոր մոտեցումներ և ծրագրեր: Այն փաստը, որ ուսուցիչները համատեղ ուժերով, համատեղ քննարկմամբ կառաջարկեն մեթոդներ ու լուծումներ դասավանդման կոնկրետ խնդրի հաղթահարման, կոնկրետ աշակերտի կարիքներին համապատասխան ուսուցումը կազմակերպելու համար, կարևոր մաս կկազմի դասավանդման որակը բարելավելու գործընթացում:
- Անկախ այն հանգամանքից, թե որքանով արդյունավետ ուսում է ստանում աշակերտը դպրոցում, ընտանիքի մասնակցությունը համարվում է անփոխարինելի պայման, եթե մենք ցանկանում ենք ապահովել, որ երեխայի ստացած գիտելիքները կիրառվեն տանը կամ իրական կյանքի այլ իրավիճակներում: Փորձը ցույց է տալիս, որ ընտանիքի անդամները կարող են կարևոր ռեսուրս լինել, եթե պատշաճ կերպով տեղեկացվեն, նախապատրաստվեն, նրանց վստահություն և հավատ ներշնչվի, և ոչ մի ջանք չպետք է խնայել ուղղելու և ուղղորդելու նրանց աջակցությունը երեխայի հետ աշխատանքում:
- Ամբողջ կրթության նպատակը պետք է ուղղված լինի անհատի կարիքներին, և շատ կարևոր է, որպեսզի գնահատման ռազմավարությունը մշակված լինի առաջընթացի գնահատումը խթանելու նպատակով: Գնահատումը պետք է ուղղված լինի դրական զարգացումները բացահայտելուն:

Ներառական կրթությունը Հայաստանում

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին համակարգված պրոֆեսիոնալ աջակցություն ցուցաբերելու գիտակցությամբ «Հույսի կամուրջ» ՀԿ-ն:

ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ 2001-ին առաջինը Հայաստանում սկսեց ներառական կրթության ծրագիրը: Այսօր արդեն ներառական կրթությ ան «Հույսի կամուրջի» փորձը դարձավ այն հիմքը, որի վրա երկրում մշակվեցին ներառական կրթության քաղաքականությունը: Փնտրելով և կարդալով ընտանիքների և նրանց տարբեր կարիքների մասին `

մենք բախվել ենք մի կարևոր խնդրի, որը ցանկանում ենք լուծել ` հատուկ կարիքավոր երեխաների տուն: Մենք դա կանենք առանց դատելու, բայց գաղափարներ և աջակցություն ցուցաբերել այն երեխաներին, ովքեր ունեն հատուկ կարիքներ:

Հատուկ կարիքներ ունեցող երեխա ունենալը պարզապես դա է նշանակում մեր որդին կամ դուստրը ավելի շատ օգնության կարիք ունեն ֆիզիկական, բժշկական, հուզական կամ ուսուցման խնդրի պատճառով:

Ինդեքս

Ընդունեք ձեր երեխային այնպիսին, ինչպիսին կա և գնահատեք նրան

Հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաներ ունեցող ընտանիքներից շատերը առաջնորդվում են արժեքներով: Նրանց համար դժվար է օգնություն խնդրել ` ընտանիքի մյուս անդամներից, ընկերներից կամ հաստատություններից և նրանք ձգտում են ուժեր

հրինել և թափել ամբողջ դրական էներգիան, որպեսզի այս երեխաները կարողանան ունենալ առավելագույն ինքնավար կյանքը:

Հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխա ունենալու գործընթացն դա մարտահրավեր է ցանկացածի համար: Եկեք գիտակցենք, որ այս հասարակության մեջ մյուսի վերաբերյալ սպասելիքները գերագնահատված են: Այն, ինչ մենք ասելու ենք, ակնհայտ է. Ամենակարևորն այն է, որ նրանք իրենց ամեն ինչից վեր սիրված զգան, և գնահատվեն իրենց գոյության համար և ոչ թե այն բանի համար, թե ինչ են: Դրանց հանդեպ վստահությունն ամենաանհրաժեշտն է ձեր սեփական ընդունման համար:

Յուրաքանչյուր մարդ ունի անտարբեր տեմպերը զարգացնելու համար իսկ մյուսի հետ համեմատությունը տառապանք է: Մենք իսկապես պետք է կանգ առնենք և մտածենք ներկա պահի արժեքի մասին:

Հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների որոշ ընտանիքներ հայտնվում են սոցիալական իրավիճակներում, երբ նրանք «ամաչում են» իրենց երեխայի վարքից: Մոռացեք այն, ինչ մտածում են այլ մարդիկ: Ամեն ինչ արեք, որ ձեզ ընդգրկված զգաք ու դադարեք հաճախել ծննդյան տոների երեկույթներ, գնալ էքսկուրսիաների, ապրել ազատության մեջ: Այստեղ որոշ գաղափարներ ունեք նրա հետ արձակուրդ մեկնելու համար:

Նրա համար դա այլեւս անփոխարինելի է

Մենք գիտենք, որ դա շատ բարդ է, բայց Նրանց բոլորին տալը նրանց համար անբարենպաստ իրավիճակներին պատրաստելու լավագույն միջոցը չէ: Այն, ինչ մենք պետք է անենք որպես ծնողներ և ընտանիքներ, նրանց ուղեցույցներն են, որպեսզի հետագայում նրանք կարողանան դա անել իրենց համար: Ես ձեզ օրինակ եմ բերում:

Եթե դուք սովորեցնում եք նրան հագուստ հագնել, գդալ օգտագործել կամ մաքրել ատամները, արեք դա նորմալ, նախ եղեք նրա մոդելը, ապա արեք դա նրա հետ, և եթե նա դժվարություններ է ունենում, Դուք նրան կամաց-կամաց օգնում եք և աստիճանաբար հետ եք վերցնում այս օգնությունը: Սա ձեզ ավելի վստահ ու հպարտ կզգաք:

Հիշեք, որ Նա երեխա է, դեռահաս, և կբարձրանա իր բնավորությամբ: Դուք պետք է նրան շնորհեք այն ազատությունը, որը ցանկացած երեխա է խնդրում `կապված իր տարիքի հետ: Սա կնպաստի ձեր հնարավորությունների զարգացմանը:

Հատուկ կրթություն կամ ներառական կրթություն

Տեսությունն ասում է, որ կարևորը այն հաստատության տեսակը չէ, որում կատարվում է ուսուցումը: Այսօր միտում կա դեպի ներառական դպրոցներ, որտեղ կրթական ծրագիրը

բավականաչափ ճկուն է `այն լիարժեք հարմարեցնելու համար դրա կարիքն ունեցող երեխայի իրական կարիքներին:

Կարևորը դա է ընտանիքների, ընկերների, հասարակության ընդունում: Ներառական դպրոցն անօգուտ է, եթե այդ գնահատումը չի պահպանվում դասարանում կամ արտերկրում: Դասավանդվող դպրոցական ծրագիրը, լինի դա հատուկ կամ հանրակրթական այս կենտրոններում, հիմնված է հանրակրթության ուսումնական ծրագրերի վրա, յուրաքանչյուր ուսանողի `ֆիզիկական կամ մտավոր կարիքներին հարմարվելու հատկանիշ:

Հարաբերություններ քույրերի և եղբայրների հետ

Եղբայրական հարաբերությունները միշտ շատ կարևոր և հիմնարար են, այն մեկն է ավելի երկարատև կապեր և տարբերակող ծնողներից: Եթե դա կարևոր է այն ընտանիքներում, որտեղ երեխաներից մեկը հատուկ կարիք ունի, ապա դա կարևոր է դառնում:

Դա էական է հաղորդել քրոջ կամ քրոջ հաշմանդամության մասին, օգնելով ձեզ ճանաչել իրավիճակը և առնչվել դրան: Իմանալ քրոջ և քրոջ հետ շփվելը և խաղալը կարևոր արժեքներ կխթանի երկուսիդ մեջ: Կարևոր է նաև, որ եղբայրը կարողանա արտահայտել այն, ինչ զգում է և կիսել այն `սկսած հիասթափությունից, խանդից, մերժումից ...

Եղբայրը պետք է հարգվի և գնահատված է իր գործունեության և հոբբիների մեջ: Ծնողները պետք է նաև նրան շնորհեն ինքնուրույնություն և անկախություն, որը պատկանում է իրեն: Նա եղբայր է, ոչ հոգատար, ոչ էլ հայր գործիչ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ դպրոցներում երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները բացահայտելուց հետո, ներառական կրթությունը ենթադրում է երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման հանդեպ առավել ճկուն մոտեցման: Հատուկ կարիքներով երեխաների ուսուցումը կազմակերպելիս պետք է հենվել հոգեբանական նուրբ մեխանիզմների վրա, մասնավորապես կիրառել այնպիսի մեթոդիկա, որի կիրառմամբ կբացահայտվեն զգայաշարժողական համակարգի և երեխայի լեզվամտածողության միջև առկա կապերը:

Չնայած ներառական կրթությունում առկա դժվարություններին, այնուամենայնիվ, ուսուցիչն ու բազմամասնագիտական թիմը համագործակցության արդյունքում կարող են հասնել որոշակի առավելությունների:

Նշենք, որ ուսուցչի շնորհիվ է դասարանում ստեղծվում այն վստահության մթնոլորտը, որը թույլ է տալիս դասապրոցեսը դարձնել առավել հետաքրքիր, արդյունավետ և բազմաբովանդակ: Պետք է նշել, որ ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. Եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից՝ երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել:

Ինչպես նաև ներառական կրթության ուսումնասիրությունից հետո եկանք այն եզրակացության, որ ուսումնական հաստատություններում բուլինգի հայտնաբերելուց և կանխելուց հետո, անհրաժեշտ է բուլինգի ենթարկված երեխաներին էլ օգնենք ներառական կրթության միջոցով:

Այս աշխատությունը կարելի է ավարտել Մ. Գորկու հետևյալ խոսքով, որ երեխաներին սովորեցնելն անհրաժեշտ գործ է: Հարկ է հասկանալ, որ հույժ օգտակար է նաև մեզ սովորել երեխաներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Սոցիալական հավասարությունը և արդարությունը դպրոցում մանկավարժական ձեռնարկ. Սիփան Հայրապետյան, Կարեն Նազարյան, Զավեն Տոնոյան, ք. Երևան 2020թ.

· Назарова, Н. М. Интегрированное образование: генезис и проблемы внедрения / Н.М. Назарова/ Коррекционная педагогика.

· Համացանց

· Загуменнов. Ю.Л. Обеспечение равных возможностей для учащихся в получении качественного образования в условиях его диверсификации

· Նախաշավիղ

· Назарова, Н.М. Интегррованное образование.